ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 26 փետրվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Քննության առնելով քաղաքացի Վարդան Հարությունյանի դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. Քաղաքացի Վարդան Հարությունյանը 16.02.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի՝ «Դատախազի, դատավորի, դատախազության քննիչի» բառերով սահմանված դրույթների սահմանադրականությունը:

2. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է ընդունել.«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի «Դատախազի, դատավորի, դատախազության քննիչի» դրույթի «դատավորի և դատախազության քննիչի» արտահայտությունը որպես ՀՀ Սահմանադրության 6-րդ, 14.1-րդ, 34-րդ, 42-րդ հոդվածներին հակասող՝ ճանաչել անվավեր»:

Դիմողը նշում է, որ մինչև 2007 թվականի մայիսի մեկը գործել է «Դատախազության մասին» 01.07.1998թ. ՀՀ օրենքը: Դատախազների և քննիչների նյութական և սոցիալական

ապահովության հարցերը կարգավորվել են օրենքի 40-րդ հոդվածով: Նշված օրենքը դատախազության աշխատողի ստաժի մեջ ներառել է իրավաբանի մասնագիտական ստաժ, աշխատանքային ստաժ, դատախազությունում ծառայության ժամկետ հասկացությունները: Օրենքում առկա է իրավական անորոշություն, և այդ օրենսդրական անորոշությունը վերացնելու նպատակով ՀՀ վճռաբեկ դատարանը 2007 թվականի թիվ 3-1644 (ՎԴ) քաղաքացիական գործով ըստ հայցի Հովհաննես Լալայանի փվել է «Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքում ստաժի հասկացության մեկնաբանությունը՝ նշելով, մասնավորապես, որ «... օրենքում աշխատանքային ստաժի վերաբերյալ դրույթը պարունակում է երկիմաստություն, և այն չի կարող մեկնաբանվել նեղ իմաստով՝ սահմանափակելով դրա կիրառության շրջանակները: Ուստի բոլոր այն դեպքերում, երբ չկա համապատասխան հարաբերությունը համապարփակ կերպով կարգավորող իրավական ակտ, օրենքի ընդհանուր ձևակերպումը պետք է մեկնաբանվի հօգուտ քաղաքացու...»:

Հիմք ընդունելով օրենքի դրույթները և ՀՀ վճռաբեկ դատարանի՝ դատախազության աշխատողի աշխատանքային ստաժի վերաբերյալ մեկնաբանությունը՝ ՀՀ գլխավոր դատախազությունը դիմողի աշխատանքային ստաժը հաշվել է 36 տարի 6 ամիս 25 օր, որը դիմողին հնարավորություն է տվել օգտվել դատախազության աշխատողների համար օրենքով սահմանված նյութական և սոցիալական ապահովության իրավունքներից:

2007 թվականի մայիսի 1-ից ուժի մեջ է մտել «Դատախազության մասին» ՀՀ գործող օրենքը: Համաձայն վերջինիս 75-րդ հոդվածի 1-ին մասի՝ 55-րդ հոդվածը ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից, իսկ մինչ այդ դատախազների աշխատավարձի հաշվարկը կատարվել է 1998 թվականի հուլիսի 1-ի «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-15-րդ մասերին համապատասխան:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասը դասային աստիճան ունեցող դատախազների համար սահմանում է հավելավճար՝ դատախազի, դատավորի և դատախազության քննիչի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար:

Դիմողի կարծիքով՝ վերոնշյալ դրույթի մասը՝ «դատախազ, դատավոր, դատախազության քննիչ» արտահայտություններով ձևակերպումը, սահմանափակում է դատախազության աշխատողի իրավունքները: Արդյունքում արհեստականորեն նվազեցվում է աշխատավարձի վերահաշվարկի ժամանակ աշխատանքային ստաժի ժամանակահատվածը, որը սահմանված էր «Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքով:

Դիմողը գտնում է, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասում «դատախազ, դատավոր, դատախազության քննիչ» արտահայտությունը օրենսդրի կողմից բացահայտ խտրական մոտեցման դրսևորում է և հակասում է ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածին:

Այս արտահայտությունը ոչ թե բարելավում է դատախազության աշխատողների կենսամակարդակը, այլ վտիթարացնում է նրանց իրավական վիճակը, ինչը հակասում է Սահմանադրության 34-րդ հոդվածին: Եվ քանի որ այս դրույթների առկայությունը վտիթարացնում է անձի իրավական վիճակը, ուստի այն հետադարձ ուժ ունենալ չէր կարող, ուստի այն հակասում է նաև ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածին:

3. Դիմումի և դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ.

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով դիմումի և դրան կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 և 69-րդ հոդվածների, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետի պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Վարդան Հարությունյանի դիմումով գործն ընդունել քննության և պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

26 փետրվարի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/1-5